ԻՆՉՊԵՍ ՀՈԳԱԼ ՍԵՓԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.

- Մինչև մեկնելու մասին որոշում կայացնելը փորձեք հեռախոսային կապ հաստատել գործատուի հետ, համացանցում գտեք տեղեկություն ընկերության մասին կամ հավաստիացեք, որ ընկերությունը գրանցված է հետևյալ էլեկտրոնային շտեմարաններում. REGON՝ **www.stat.gov.pl/regon/** և KRS՝ **www.krs-online.com.pl**
- Եթե աշխատանքի հրավիրող ընկերությունը աշխատանքի տեղավորման լեհական գործակալությունն է, ապա վերջինիս տվյալները պետք է առկա լինեն Աշխատանքի գործակալության ազգային ռեգիստրում՝ **www.kraz.praca.gov.pl**
- **ՀԻՇԵ՛Ք**, որ Լեհաստանի Հանրապետության տարածքում աշխատանքի տեղավորման միջնորդական ծառայություններ մատուցելու համար պարտադիր պայման է Աշխատանքի գործակալության ազգային ռեգիստրում գրանցվելը: Գրանցված կազմակերպությունը ստանում է գրանցումը հավաստող վկայագիր: Աշխատանքի տեղավորման գործակալությունների ցանկը կարող եք գտնել Աշխատանքի գործակալության ազգային ռեգիստրում՝ **www.kraz.praca.gov.pl**
- **ՀԻՇԵ՛Ք**, աշխատանքի տեղավորման ծառայություններ մատուցելու իրավունք չունեցող «միջնորդների» ծառայություններից օգտվելը մեծ ռիսկ է պարունակում: Օրինակ, Լեհաստան ժամանելուց հետո կարող է պարզվել, որ աշխատանքի և վարձատրության պայմանները խիստ տարբեր են առաջարկվածից: Միջնորդի հետ գրավոր պայմանագրի (կամ առնվազն նրա անձնական տվյալների) առկայությունը կապահովի Ձեր անվտանգությունը
- **ՄԻ՛ ՏՎԵՔ** այլ անձանց Ձեր անձնագիրը կամ անձը հաստատող փաստաթուղթը
- **Մինչ մեկնելը ծանոթացեք Լեհաստանում ապրելու և աշխատելու պայմանների ու առանձնահատկությունների հետ: Նման տեղեկություններ կարող եք գտնել միգրացիայի ոլորտում գործառույթներ և ծրագրեր իրականացնող լեհական պետական և ոչ պետական կազմակերպությունների կայքէջերում կամ նրանց կողմից հրապարակված տպագիր նյութերում**

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Աշխատանքի պետական տեսչություն – տրամադրում է անվճար խորհրդատվություն և տեղեկատվություն աշխատանքային օրենսդրության և աշխատանքի ընդունման օրինականության վերաբերյալ, քննում է գործատուների կողմից աշխատանքային օրենսդրության նորմերի խախտման, աշխատանքի անվտանգության և հիգիենայի կանոնների չպահպանման, ինչպես նաև անօրինական աշխատանքի մասին աշխատողների բողոքները: Աշխատանքի պետական տեսչության մարզային ստորաբաժանումների (յուրաքանչյուր մարզկենտրոնում) և տարածքային ստորաբաժանումների (այլ մեծ քաղաքներում) հասցեները և հեռախոսահամարները կարող եք գտնել հետևյալ կայքում՝ **www.pip.gov.pl**

Աշխատանքի և սոցիալական քաղաքականության նախարարություն՝ www.mpips.gov.pl

Սահմանապահ ծառայություն՝ www.strazgraniczna.pl

Օտարերկրացիների հարցերով վարչություն՝ www.udsc.gov.pl

Արտաքին գործերի նախարարություն՝ www.msz.gov.pl

ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Միգրացիայի միջազգային կազմակերպության գրասենյակ (IOM) Վարշավայում. տրամադրում է տեղեկատվական օժանդակություն օտարերկրացիներին: Կայքը՝ **www.migrant.info.pl** (կարող եք գտնել տեղեկություններ ռուսերեն և հայերեն), հեռ. 22 490 20 44; հեռ. (Հայաստանում): 0 800 01020

Իրավական միջամտության ընկերակցություն. տրամադրում է անվճար խորհրդատվություն օտարերկրացիներին: Կայքը՝ **www.interwencjaprawna.pl**, հեռ.՝ +48 22 629 56 91, +48 22 621 51 65

Մարդու իրավունքների հելսինկյան հիմնադրամ. տրամադրում է իրավական աջակցություն միգրանտներին: Կայքը՝ **www.hfhr.org.pl,** հեռ.՝ (22) 556 44 66

Զարգացում առանց սահմանների հիմնադրամ (FROG). տրամադրում է անվճար խորհրդատվություն օտարերկրացիներին: Կայքը՝ **www.frog.org..pl**, հեռ.՝ +48 22 403 78 72; էլ.փոստ՝ **info@frog.org.pl**

«Փրկություն» հիմնադրամ. տրամադրում է անվճար խորհրդատվություն օտարերկրացիներին: Կայքը՝ **www.ocalenie.org.pl**, հեռ.՝ +48 22 828 04 50

Հալինա Նիեչի անվան իրավական աջակցության կենտրոն. տրամադրում է իրավական աջակցություն միգրանտներին: Կայքը՝ **www.pomoc.prawna.org**, հեռ.՝ +48 22 633 72 23, էլ. փոստ՝ porady@pomocprawna.org

Ընդեմ մարդկանց առևտրի և ստրկության «Լա ստրադա» հիմնադրամ. տրամադրում է ապաստան, բժշկական, իրավական, հոգեբանական աջակցություն, օժանդակում է ծագման երկիր անվտանգ վերադարձին Կայքը՝ **www.strada.org.pl**, **www.kcik.pl**, հեռ.՝ +48 22 628 99 99, +48 22 628 01 20

Ministerstwo Pracy i Polityki Społecznej

ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ԱՇԽԱՏԱՆՔ ԼԵՀԱՍՏԱՆՈՒՄ

Պարզեցված ընթացակարգ Բելառուսի, Հայաստանի, Վրաստանի, Մոլդովայի, Ռուսաստանի և Ուկրաինայի քաղաքացիների համար

Լեհաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական քաղաքականության նախարարի 2011 թվականի հուլիսի 20-ի հրամանի 22-րդ կետը սահմանում է այն դեպքերն ու պայմանները, երբ օտարերկրացուց Լեհաստանի Հանրապետության տարածքում աշխատանքային գործունեությամբ զբաղվելու համար աշխատանքի թույլտվություն չի պահանջվում (Dz.U. z 2011 r. Nr 155, poz. 919, z późn. zm.)

Իրավական կարգավորումը՝ 2014թ-ի հունվարի դրությամբ

ԻՆՉՊԵ՞Ս ԱՇԽԱՏԵԼ ԼԵՀԱՍՏԱՆՈՒՄ

- Ընդհանուր դեպքում օտարերկրացիները Լեհաստանում աշխատանքային գործունեություն ծավալելու համար պետք է ստանան աշխատանքի թույլտվություն
- Սակայն, գոյություն ունեն բազմաթիվ բացառություններ: Դրանցից մեկն, այսպես կոչված՝ պարզեցված ընթացակարգով, առանց աշխատանքի թույլտվության Լեհաստանում աշխատելու հնարավորությունն է: Պարզեցված ընթացակարգով աշխատանքի թույլտվություն կարող են ստանալ Բելառուսի, Հայաստանի, Վրաստանի, Մոլդովայի, Ռուսաստանի և Ուկրաինայի քաղաքացիները՝ Լեհաստանում գրանցված գործատուի՝ օտարերկրյա քաղաքացուն աշխատանքի ընդունելու մտադրության մասին հայտարարագրի հիման վրա

Ի՞ՆՉ Է ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Գործատուն, ով մտադիր է աշխատանքի ընդունել օտարերկրացուն, կազմում է հայտարարագիր, որում, մասնավորապես, նշում է իր և օտարերկրացու տվյալները, աշխատանքը սկսելու ամսաթիվը և տևողությունը, պայմանագրի տեսակը, հաշվարկային աշխատավարձի չափը, մասնագիտությունը կամ պաշտոնը և աշխատանքի վայրը

↓

Գործատուն գրանցում է հայտարարագիրն՝ ըստ իր գրանցման կամ գործունեության վայրի՝ համապատասխան աշխատանքի պետական տեսչության մարզային վարչությունում

↓

Գործատուն հայտարարագրի բնօրինակը հանձնում է օտարերկրացուն

↓

Հայտարարագիրը կարող է հիմք հանդիսանալ աշխատելու նպատակով Լեհաստան մեկնող օտարերկրացուն լեհական հյուպատոսական ծառայության կողմից երկիր մուտքի արտոնագիր տրամադրելու համար

↓

Հայտարարագրի, ինչպես նաև աշխատելու իրավունք տվող կացության կարգավիճակի առկայությունը հնարավորություն է տալիս Լեհաստանի Հանրապետության տարածքում կարճաժամկետ աշխատանքային գործունեությամբ զբաղվելու համար: Այդպիսի աշխատանք կարելի է կատարել գործատուի հետ գրավոր պայմանագիր կնքելուց հետո

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

- Իրավունք ունեք աշխատելու Լեհաստանում 6 ամիս ժամկետով հերթական 12 ամիսների ընթացքում
- Իրավունք ունեք աշխատելու ցանկացած ոլորտում: Պարզապես անհրաժեշտ է հայտարարագրում նշել ոլորտը
- Իրավունք ունեք կնքելու գրավոր պայմանագիր, որը հիմք է աշխատելու համար
- Գործատուն պարտավոր է 7 օրվա ընթացքում հայտ ներկայացնել համապատասխան մարմիններին Ձեզ սոցիալական և առողջապահական ապահովագրության համակարգերում ընդգրկելու նպատակով: Ապահովագրությունը իրավունք է տալիս Ձեզ հիվանդության, աշխատանքի ժամանակ պատահարի կամ հղիության և ծննդաբերության դեպքերում օգտվելու անվճար բուժօգնության ծառայություններից: Սա չի տարածվում ծառայության մատուցման պայմանագրերի վրա
- Իրավունք ունեք ստանալու Լեհաստանում սահմանված նվազագույն աշխատավարձը, եթե աշխատում եք աշխատանքային պայմանագրով: Հիշե՛ք, որ հայտարարագրում նշված է հաշվարկային աշխատավարձը, այսինքն դրանում ներառված են լեհական օրենսդրությամբ սահմանված հարկերն ու վճարները: Ուշադրություն դարձրեք, թե ինչ արժույթով է նշված աշխատավարձը

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ստուգումների իրականացման դեպքում պատկան մարմինները կարող են պահանջել ներկայացնել հայտարարագրի բնօրինակը, Լեհաստանի Հանրապետության տարածքում կացության կարգավիճակը հավաստող փաստաթուղթը (օրինակ՝ մուտքի արտոնագիրը, կացության քարտը) և աշխատանքային պայամանագիրը
  Լեհաստանում անօրինական աշխատելը կամ անօրինական գտնվելը կարող է լուրջ հետևանքներ ունենալ, օրինակ՝ պատիժ տուգանքի տեսքով կամ վտարում Լեհաստանից: Վտարման մասին որոշման դեպքում օտարերկրացու տվյալները գրանցվում են Լեհաստանում անցանկալի օտարերկրացիների ցուցակում, ինչպես նաև Շենգեն տեղեկատվական համակարգում՝ մուտքի արգելք սահմանելու և Շենգեն գոտի վերադառնալու հնարավորության բացառելու նպատակով
- Աշխատել կարող եք բացառապես հայտարարագիր ներկայացրած գործատուի մոտ: Գործատուի փոփոխության դեպքում նոր գործատուն պետք է գրանցման ներկայացնի նոր հայտարարագիր

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ

- Պարզեցված ընթացակարգով աշխատանքի հրավիրելու նախաձեռնությամբ հանդես է գալիս գործատուն. միայն նա կարող է դիմել պատկան մարմնին հայտարարագիրը գրանցելու հայտով
- Հայտարարագիրը գրանցվում է անվճար: Գործատուից կամ միջնորդից վճար պահանջելու դեպքում նախատեսվում է պատիժ տուգանքի տեսքով
- Եթե Լեհաստանում Ձեր կացության հիմքը “DO5” արտոնագիրն է, որը տրվել է գրանցված հայտարարագրի հիման վրա, ապա Լեհաստանում Ձեր գտնվելու ժամկետը չի կարող գերազանցել 6 ամիսը հերթական 12 ամիսների ընթացքում
- Անկախ այն հանգամանքից, թե քանի գործատուի մոտ եք աշխատել՝ հայտարարագրի հիման վրա աշխատելու ժամանակահատվածը չի կարող գերազանցել 6 ամիսը
- Հայտարարագրի հիման վրա կարող են աշխատել նաև այն անձինք, ովքեր արդեն իսկ գտնվում են Լեհաստանում, ունեն կացության կարգավիճակ, որն աշխատանքի իրավունք է տալիս (արտոնագրերի դեպքում բոլորը, բացառությամբ «01», «22», ՝ն «23»-ի)
- Եթե գործատուն ցանկանում է շարունակել աշխատանքային հարաբերությունները Ձեզ հետ հայտարարագրով սահմանված և թույլատրված ժամկետի ավարտից հետո, նա կարող է հայտարարագրի հիման վրա աշխատանքի 3 ամիսը լրանալուց հետո դիմել վոևոդին՝ Ձեզ աշխատանքի թույլտվություն տրամադրելու խնդրանքով: Այս դեպքում աշխատանքի թույլտվությունը տրամադրվում է պարզեցված ընթացակարգով, քան ենթադրում է ընդհանուր ընթացակարգը
- Լեհաստանում հնարավոր է աշխատել տարբեր պայմանագրերի հիման վրա, այդ թվում՝ աշխատանքային պայմանագիրը, քաղաքացիաիրավական պայմանագրերը, ինչպիսիք են ծառայության մատուցման պայմանագիրը կամ կապալի պայմանագիրը: Պայմանագրի տեսակի ընտրությունը կախված է աշխատանքի բնույթից, ինչպես նաև գործատուի ու աշխատողի իրավունքների և պարտականությունների շրջանակից

Աշխատանքային պայմանագիրն է, որ աշխատողին օժտում է առավելագույն իրավունքներով և ապահովում առավելագույն պաշտպանվածություն